

Սերգեյ Ա. Աղաջանյան
Բանասիր. գիտ. դոկտոր

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԻՄԱՆԵՆՏ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ըստ Հովհ. Թումանյանի հրապարակախոսության*

Բանալի բառեր - ինքնություն, հրապարակախոսություն, մշակույթ, իմաստնություն, գիտականություն, սկզբունքայնություն, պատմական փորձ, կենսական հանգամանքներ, սիմուլյակր, արդիականություն:

Մուտք

Հովհ. Թումանյանի կյանքին, ստեղծագործությանն ու հրապարակախոսությանն առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ գրականության պակաս կարծես թե չկա: Բայց այդ ամենին յուրաքանչյուր անդրադարձ մեզ համոզում է, որ նրա վաստակի մեջ դեռ շատ բան ունենք նորովի ճանաչելու և գնահատելու: Նա հի-րավի անսպառ մեծություն է, ով կյանք մտնող յուրաքանչյուր նոր սերնդի կեն-սական հանգամանքներում վերահաստատում է իր արդիականությունը և ար-տաժամանակային լինելու պարադոքսը: Ահա թե ինչու են Հովհ. Թումանյանի վաստակին նորովի անդրադարձներն իմաստավորված և միշտ անհրաժեշտ:

Հովհ. Թումանյանը մեր մշակույթի (բառի գիտական և ամենաընդգրկուն ի-մաստով) բացառիկներից է, ում կարելի է բնութագրել միայն «հանճար» բառով: Եվ ինքը գիտեր իր արժեքը: Բայց դա իրեն պետք չէր: Դա պետք է մեզ: Մեր ի-մացությունից նա հետմահու ոչինչ չի շահում, բայց չիմացությունից կորցնում ենք մենք: Եվ անհատույց ենք կորցնում, ճիշտ այնքան, որքան իր անչափելի մե-ծությունն է: Այդ մեծության ստեղծած անսպառ արժեքների մի կարևոր մասն էլ մենք նրանից ժառանգություն ենք ստացել որպես իմաստնությամբ լի **հրապարակախոսություն**:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11.2019:

1. Հովհ. Թումանյանի հրապարակախոսությունը

Հովհ. Թումանյանի հրապարակախոսությանն անդրադարձներ կատարվել են տարբեր մոտեցումներով՝ արժարժված հարցերի թեմատիկ պարբերացում (Խ. Գյուլնազարյան¹), բնորոշ յուրահատկություններ (Գ. Անանյան²), կենսական հանգամանքների հետ զուգադրություններ (Լ. Հախվերդյան³, Լ. Կարապետյան⁴), ազգային ինքնաճանաչողության դրսևորումներ (Ժ. Մխիթարյան⁵), աշխարհայացքային վերլուծության համատեքստ (Հ. Բայադյան⁶, Ա. Ալեքսանյան⁷), նաև այլ հարցադրումներ⁸, ինչը պայմանավորված է Մեծ լոռեցու հրապարակախոսության մեջ արժարժված խնդիրների բազմազանությամբ:

Թեև Թումանյանի հրապարակախոսության նկատմամբ մասնագիտական վերաբերմունքի լրջության պակաս չկա, սակայն բանը հասել է անգամ իր անհամոզությամբ զարմանալի նման բնութագրման. «Թումանյանի հրապարակախոսության բովանդակության էական և ամենաարժեքավոր գիծը հայ-ռուս բարեկամության արտացոլումն էր, Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրման ու փրկության հավատը»⁹: **Մինչդեռ ակնհայտ է, որ Հովհ. Թումանյանի հրապարակախոսության «էական և ամենաարժեքավոր գիծը», նույնիսկ մտասևեռումը հայ ժողովրդի՝ գոյապահպանության, տասնիններորդ դարավերջի ու քսաներորդ դարի առաջին քառորդի սոցիալական ու քաղաքական լրջագույն փորձություններից հնարավորինս քիչ կորուստներով դուրս գալու և հոգևոր մշակութաստեղծ կարողությունների անկաշկանդ ծավալումով վերածնվելու խնդիրն է:** Կենսականորեն հրատապ այդ խնդրի լուծման մեջ Հովհ. Թումանյանն առաջին հերթին կարևորում էր ազգային ինքնության որակների խիստ ու օբյեկտիվ լուսաբանումը, ժամանակավրեպից ու մերժելիից ազատագրվելու անհրաժեշտությունը: Մի խոսքով՝ ազգապահպանման խնդրի լուծման համար նա առաջնահերթ կարևորություն էր տալիս ռեֆլեքսիային, որից անբաժան է նաև անցած պատմական ուղու հետահայաց՝ ռետրոսպեկտիվ արժևորումը: Ահա սա է Հովհ. Թումանյանի հրապարակախոսությ-

1 Տե՛ս **Գյուլնազարյան Խ.**, Թումանյանի քննադատական և հրապարակախոսական ժառանգությունը, տե՛ս **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատ. 6, Եր., 1994, էջ 545-646:
2 Տե՛ս **Անանյան Գ.**, Թումանյանի հրապարակախոսությունը, «ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր)», պրակ 2, Եր., 2002, էջ 111-135:
3 Տե՛ս **Հախվերդյան Լ.**, Թումանյանը և իր ժամանակը, Եր., 1995:
4 Տե՛ս **Կարապետյան Լ.**, Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը, Եր., 1992:
5 Տե՛ս **Մխիթարյան Ժ.**, Ազգային ինքնաճանաչողությունը Հովհաննես Թումանյանի հրապարակախոսությունում, Եր., 2007:
6 Տե՛ս **Բայադյան Հ.**, Հայրության որպես արդիական ազգի գաղափարը Թումանյանի հրապարակախոսության մեջ, «ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր)», պրակ Թ, Եր., 2009, էջ 26-39:
7 Տե՛ս **Ալեքսանյան Ա.**, Լևոն Շանթի և Հովհաննես Թումանյանի կենսափմաստասիրությունը, «Վէմ» համահայկական հանդես, Եր., 2019, N 1, էջ 67-99:
8 Տե՛ս ժուռնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), պրակ Թ, Եր., 2009:
9 **Մկրյան Մ.**, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր., 1981, էջ 348:

ան առանցքը՝ անկախ այն բանից, թե մակերեսին երևացող շերտում նա ինչի մասին է գրել, ինչ հարակից հարցերի է անդրադարձել, իր վերլուծություններում ո՛ր հզոր երկրների հետ է (ի միջի այլոց, ոչ միայն Ռուսաստանի) հոյսեր կապել՝ ելնելով ստեղծված աշխատաքաղաքական իրավիճակից:

Սակայն հարկ է նաև նշել, որ այս ակնհայտ իրողությանը համարժեք չափով չեն կարևորվել մեր ինքնության վերաբերյալ Հովի. Թումանյանի սկզբունքային, օբյեկտիվ ու ազնիվ դիտարկումները: Դժվար է միանշանակ ասել, թե ինչու: Միգուցե պատճառն այն է, որ դրանց սկզբունքային անկեղծությունը երբեմն ցավեցնող է, ստիպում է այլ կարծիք ձևավորել հայ մտավորականի, ունևորի և շարքային մարդու հավաքական ու անհատական նկարագրի մասին: Մի բան, որը, ժամանակակից հասարակագիտական լեզվով ասած, մեր վերաբերյալ մեր և այլոց ձևավորած հաճախ անհիմն, իրականությանը չհամապատասխանող (անկախ մեծարական կամ վատաբանող լինելուց) սիմուլյակրների (Ժ. Բոդրիյար) վերանայում է ենթադրում: Հովի. Թումանյանը սթափ, ազնիվ ու անկաշկանդ գնացել է դրան՝ հնարավորինս փաստարկված տարբերակելով ու շեշտադրելով իրենց մշակութաստեղծ գործունեությամբ հայտնի ազգերի կողքին մեզ նկատելի դարձնող արժեքները և ժխտելով մեր նկարագրում առկա արատավորության դրսևորումները: Նրա հիշատակը նույնը պահանջում է նաև իր հետնորդներից:

Բայց խնդիրը միայն դրանով չի սպառվում: Նշված հպանցիկության հետևանքով ուղղակի անտեսվել են թումանյանական դիտարկումների արդյունք այն ճշմարտությունները, որոնք առկա են նաև մեր արդի նկարագրում և կարող են ուսումնասիրելի լրջագույն նյութ լինել արդի հայագիտության համար: Ուրեմն որքան անտեսել ենք այդ իրողությունը, նույնքան էլ կորցրել ենք Հովի. Թումանյանի ֆենոմենը ճանաչելու մեջ: Մինչդեռ նրա հրապարակախոսության խորքային արժևորումը զգալիորեն բացահայտում է իր ինտելեկտուալ ընդգրկման սահմանները, ի վերջո՝ նրան բնորոշ կարևորագույն առանձնահատկություններից մեկը ևս, ինչն ակնհայտ է համաշխարհային մշակույթի առաջնակարգ մեծությունների դեպքում:

Բանն այն է, որ հանճարեղության թեկուզև պայմանական բնորոշման տիրույթ են մտնում հատկապես այն ստեղծագործողները, որոնց բնատուր բացառիկությունը հարստացած է լինում գիտնականին յուրահատուկ իմացականությամբ: Այդ դեպքում իրականության ստեղծագործական-պատկերավոր վերարտադրության կամ վիրտուալ վերստեղծման նրանց գործունեությունը յուրովի խորքային է դառնում գիտական մտքի մասնակցությամբ: Հովի. Թումանյանի ֆենոմենի խորհուրդը նաև դրանում է: Թեև նա հասարակագիտական-փիլի-

սովայական տրակտատներ չի գրել, բայց ողջ կյանքի ընթացքում ինքնակրթության անհագ պահանջ է ունեցել, դրա կարևորությունն ընդգծելու առիթը բաց չի թողել¹⁰ և գիտնականի հետևողականությամբ խորացել է իր համար կարևոր խնդիրների պարզաբանման մեջ: Հայտնի է, որ Հովհ. Թումանյանը, ըստ ստեղծագործական անհրաժեշտության (օրինակ՝ ժողովրդական բանահյուսական նյութերի հավաքում և մշակում), նաև ճանաչողական նկատառումներով ժամանակը ներածի չափով ծավալել է պատմաբանասիրական հետազոտական գործունեություն¹¹: Կարճ ասած՝ խոսքն այստեղ վերաբերում է նրա մտքի ինքնատիպությանը, որին հավասարապես բնորոշ են եղել և՛ գեղարվեստական պատկերավորությունը, և՛ գիտականությունը: Եվ պատահական չէ, որ իմաստուն խոսքի արժեք ունեցող նրա դիտարկումների ծաղկաքաղը կազմել է մի հատորյակ¹²: Ժամանակի ընթացքում նրա կուտակած իմաստությունը դրսևորվել է նաև հրապարակախոսության մեջ:

Ահա թե ինչու ազգային ինքնության արժևորումների թումանյանական հրապարակախոսությունը ոչ թե սոսկ օրախնդիր հարցերով ժուռնալիստական-հրապարակախոսական ժառանգություն է, հասարակության ուշադրությունը գրավելու համար արված ահազանգ և այլն, այլ գիտականությամբ հագեցած մշակութաբանական արժեք: Պարզ ասած՝ Հովհ. Թումանյանի ֆենոմենը ճանաչելի է նրա գեղարվեստական-ստեղծագործական և գիտաճանաչողական երկակի էության իմացությամբ:

Ինչևէ, հարկ է լրջորեն հաշվի նստել սթափ, ողջախոհ ու սկզբունքային այդ հրապարակախոսության հետ, որովհետև հեղինակը Հովհ. Թումանյանն է: Իսկ նա այն քչերից մեկն է, ով իր ժողովրդի համար արածով ու ապրած կյանքով վաստակել էր նույնիսկ ցավեցնող ճշմարտություններ ասելու իրավունքը: Բայց, չնայած դրան, հակառակ անգամ ներող ու հանդուրժող, ողջախոհ ու շրջախայաց իր էությանը, նա հաճախ հայտնվել է ապրած իրականության և ժամանակակիցների հետ լուրջ տարաձայնությունների, կոնֆլիկտների իրավիճակում: Եվ դա բոլորովին էլ պատահական չէր. իրականության մտայնությունը, մարդկանց շահագրգռությունները և գործունեությունը միայն քիչ դեպքերում էին համադրելի այն ամենին, ինչով նա առաջնորդվում էր առկա հիմնախնդիրների իմաստավորման մեջ ու ապրում ամենօրյա կյանքը:

Ահա թե ինչու է միանգամայն հասկանալի ու բացատրելի Հովհ. Թումանյանի հողվածների և նամակների հաճախ ընդգծված էմոցիոնալ (հիացմունք, վրդով-

10 Տե՛ս **Թումանյան Ն.**, Հուշեր և գրույցներ, Եր., 1987:

11 Տե՛ս **Ջրբաշյան Էդ.**, Թումանյանի պատմաբանասիրական աշխատությունները, տե՛ս **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատ. 8, Եր., 1998, էջ 533-551:

12 Տե՛ս **Թումանյան Հովհ.**, Մտքեր, Եր., 2015:

մունք, զայրույթ, հիասթափություն և այլն) հազեցածությունը, ըստ անհրաժեշտության՝ նաև մարտնչող ոգին, որոնք քիչ դեպքերում էին պայմանավորված իր անձնական կյանքի ցավալի հանգամանքներով:

2. Ժամանակի պահանջը և հրապարակախոս Հովհ. Թումանյանը

Իր կոչումը՝ ստեղծագործելը, մի կողմ դնելով՝ մանավանդ քսաներորդ դարակազմից Հովհ. Թումանյանը զարմանալի նվիրումով ու եռանդով ներգրավվել է հասարակական գործունեության մեջ և՛ խոսքով, և՛ ֆիզիկական մասնակցությամբ¹³: Դա ժամանակի պահանջն էր, ազգանվեր մտավորականության առաքելությունը, որի չգերազանցված խորհրդանիշը դարձավ ինքը: Իսկ ժամանակը ցարական Ռուսաստանի համար, մերօրյա հասկացությամբ ասած, անցումային էր և՛ սոցիալ-տնտեսական, և՛ քաղաքական առումներով: Առաջինը նշանավորվեց նրանով, որ թեև բազմաթիվ դժվարություններով ու թշվառությամբ հայտնի, բայց սերունդների համար հասկանալի հինը քայքայվում էր, իսկ նորն էլ դեռ ինքնահաստատման ու հղկվելու ճանապարհ ուներ անցնելու: Իրավիճակը թերևս ավելի վատթար էր քաղաքական առումով. պետական կառավարման ակնհայտ ճգնաժամի մեջ հայտնված կայսրությունը ներքաշվեց համաշխարհային պատերազմի մեջ: Մանավանդ երկրորդ հանգամանքը մինչ այդ երբևէ չեղած լրջությամբ հայությանը կանգնեցրեց լինել-չլինելու խնդրի առաջ:

Տասնիններորդ դարի երկրորդ կեսի ու քսաներորդ դարի առաջին քառորդի ամենքին հայտնի իրադարձությունները մանրամասնելու անհրաժեշտություն չկա: Միայն նշեմ, որ մեզ համար ճակատագրական այդ ժամանակաշրջանը դաժան փորձությունների շարան էր, որի ընթացքում անխնա ստուգվում էր հայ ժողովրդի և յուրաքանչյուր հայի կենսունակության պոտենցիալը՝ ջրի երես հանելով մեր ինքնության մեջ առկա ինչպես ժամանակավրեպ-վնասակար, այնպես էլ հուսալի հենարանները: Այդ իրավիճակում հրաշալիորեն դրսևորվեցին գյուղական և քաղաքային կյանքի, անցյալի ու ներկայի, ընդհանրապես հայկական իրականության լավագույն իմացությամբ իմաստնացած թումանյանական միտքն ու վարքագիծը: Նա ինքնական հանձն առավ այդ պատասխանատու պատմական հանգամանքներում հայի ինքնությունը լավ ու վատով քննելու դժվարին գործը՝ իրենով մարմնավորելով ընդօրինակելի հայ մարդու կենսակերպը:

Հովհ. Թումանյանին հրապարակախոս դարձրեց իր ապրած ժամանակը, որը պայմանավորեց նրա դիտարկումների ինչպես բազմաթեմայնությունը, այն-

¹³ Տե՛ս Հախվերդյան Լ., Թումանյանը և իր ժամանակը, Եր., 1995:

պես էլ մի կարևոր առանձնահատկություն ևս, որ է հետևյալը: Նրա հրապարակախոսության զգալի մասն ստեղծվել է էքստրեմալ իրավիճակներում և ծնունդ է հրատապ անհրաժեշտության: Ով-ով, բայց Հովհ. Թումանյանն ունեցել է և՛ այդ իրավիճակների, և՛ հատունացած անհրաժեշտությունների առաջադրած պատասխանատվության գիտակցումը: Ահա թե ինչու է քանիցս ընդգծել մի կողմից՝ հետահայաց ռեֆլեքսիան, մյուս կողմից՝ ուղենշային որոշարկումներ պահանջող եռանդամ հարցադրմանը («...ո՞վ է ինքը (հայ ժողովուրդը - Ս. Ա.), ո՞րտեղից է գալիս և ո՞ւր է գնում»¹⁴) պատասխան տալու համազգային կենսական կարևորությունը, և ինքն էլ չի խուսափել նրա լաբիրինթոսում խորանալուց: Իսկ դա լիարժեք չէր լինի առանց հազարամյակներով ձևավորված ազգային ինքնության էական բաղկացուցիչների ու դրանց գնահատականների, նաև վերածնվելու միջոցի վերաբերյալ սեփական մոտեցումները հրապարակավ որոշակիացնելու, ինչպես նաև առանց այդ ամենն իրականացնելու համար սեփական հավատամքի հրապարակման: Դրա առիթը ներկայացել էր դեռևս 1897 թ. («Ընդդիմախոսություն»), երբ դեռևս քսանութ տարեկան էր: Թեև վրդովեցուցիչ մի բանավեճի մեջ, բայց շատ հստակ ու անթաքույց շեշտադրումներով է Հովհ. Թումանյանն արել դա. «...տեղը եկած ժամանակ ես հանգիստ խղճով և մաքուր ոգևորությամբ արշավանք կսկսեմ և՛ այն **խուժանի**¹⁵ (ընդգծումը հեղինակինն է - Ս. Ա.) դեմ, որի հարազատ զավակն եմ ես և որին սիրում եմ: Ես չեմ ծառայում և չեմ էլ ծառայելու **խուժանի** (ընդգծումը հեղինակինն է - Ս. Ա.) հաճույքին ու ծայնին, այլ այն գաղափարներին, որ բարձրացնելու են նրան: Այս թող լինի... մի երդում այն **խուժանի** (ընդգծումը հեղինակինն է - Ս. Ա.) առաջ, որի կյանքի խորհուրդն ինձ համար այնքան թանկ է ու սուրբ» (6, 86):

Այսպես Հովհ. Թումանյանը որոշակիացրել է ինտելեկտուալի իր վերաբերմունքը ժողովրդի նկատմամբ, իր և ժողովրդի փոխհարաբերության հնարավոր տարբերակը կամ, այլ կերպ ասած, իր քաղաքացիական դիրքորոշումը: Եվ ով ավելի, քան հենց Հովհ. Թումանյանը, կարող էր հայտարարել, որ ինքը ոչ միայն ժողովրդի «հարազատ զավակն» է, «որին սիրում» է, այլ նաև նրա «կյանքի խորհուրդն» իր համար «թանկ է ու սուրբ»: Նա խոստովանելու պես բազմիցս ասել ու գործով հաստատել է դա. «...իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի ճակատագիրը, սրա պատմությունը, էն սոսկալի դրաման, որ կոչվում է հայոց պատմություն, ու էնտեղից են բխում նրա գործերի վրա եղած իմ հայացքն ու մտածմունքը» (6, 191): Կամ. «...ես առաջ եմ գալի ոչ թե «տիրող հանգամանք-

14 **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատ. 6, Եր., 1994, էջ 355: Այսուհետ Հովհ. Թումանյանի երկերի այս հրատարակության հատորներին հղումները կտրվեն մեջբերումից անմիջապես հետո փակագծերում նշելով հատորը և համապատասխան էջը:

15 Այստեղ Հովհ. Թումանյանն ընդգծումով գործածել է իր հետ բանավիճողի շեշտադրած բառը: Երկուսն էլ նկատի են ունեցել հայ ժողովրդին:

ներից», այլ մի արյունոտ հողից, մի անօրինակ զարհուրելի պատմությունից, մի հոշոտված ժողովրդից, ուր ինձ բանաստեղծ է արել ճակատագիրը ու ներշնչել է անկեղծ լինել ամենից առաջ» (6, 191): Ընդամենը քսանութ տարեկանում նա հրապարակեց իր հավատամքը և կարճատև կյանքի ընթացքում իսկապես «հիացմունքի արժանի հետևողականությամբ»¹⁶ գործնականում հաստատեց ու վերահաստատեց այն, ինչ էլ որ անելիս եղավ:

Բայց նույնիսկ այդ անմնացորդ նվիրումն ու իր կյանքն իմաստավորող սկզբունքների անխախտ նախընտրությունը նրան չեն շեղել օբյեկտիվ և սթափ իմացող-գնահատողի վարքագծից: Նա լավ գիտեր, որ իր ժողովրդի (ընդհանրապես) և սոցիալական տարբեր շերտերի աշխարհընկալմանը, վարք ու բարքին բնորոշ են նաև շատ մերժելի իրողություններ, որոնց ինքը երբեք չի ծառայելու, այլ ծառայելու է միայն «այն գաղափարներին, որ բարձրացնելու են նրան» (6, 86): Սիրո ու նվիրումի երդման հետ նա այդպես ընդգծել է նաև իր հեռու լինելը կույր սիրուց, ժողովուրդ ասված համահավաքության այն տարբերակից, որը հայտնի է նաև ամբոխային բնագոյով ու վարքագծով (9, 419):

Հովհ. Թումանյանի հրապարակախոսության մյուս կարևոր առանձնահատկությունն էլ խոսքի ու վարքագծի անսովոր «միանգամայն ոչ թումանյանական» կոշտությունն է, երբեմն՝ նույնիսկ վիրավորական բառերի հակադարձումը կամ օգտագործումը: Դա էլ ժամանակին յուրահատուկ միջնարդկային հարաբերությունների, լրագրողական միջավայրի մերժելի էթիկայի պարտադրանքն էր: Էլեգանտ, նրբանկատ, եվրոպականորեն կիրթ ու բարեհամբույր Հովհ. Թումանյանը դարձել է այդպիսին, երբ բախվել է մարտնչող չարամտության, համառ ու անզիջում տգիտության, ազգային կամ սոցիալական շերտերի ինքնության որևէ որակի, որի վնասակարությունը չի գիտակցվել: Սակայն նույնիսկ նման դեպքերում նա իր գործը չի ավարտել սոսկական ժխտումով, այլ դրսևորել է կենսավորձով ու գիտելիքով իմաստնացած ինտելեկտուալի վարքագիծ, ով ընդունելի ու մանավանդ մերժելի իրողությունների մեջ ցույց է տվել դրանց պատճառներն ու օրինաչափ լինելը: Օրինակ, «հանձն առնելով» երիտասարդ դերասան Կ. Գալֆայանի պաշտպանությունը («Տաղանդ և բթամտություն», 1898), մամուլի ծավալած վարկաբեկող արշավանքի մեջ տեսել և շեշտադրել է մարդկային նկարագրի ու վարքագծի օրինաչափ դրսևորումներից մեկը. «Ահա այս բանը (վարկաբեկելու, չարախոսելու արատը - Ս. Ա.) շատ հետաքրքրական է և միաժամանակ շատ բնական: Մի գաղտնի խորհրդով տաղանդի երևույթից միշտ վրդովում է բթամտությունը. նրա պղտոր գիտակցությունը ավելի խառնվում ու մթնում է և կորցնում է բանականության ու բարոյականության բոլոր լուսավոր նշանները» (6, 110-111):

¹⁶ Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Եր., 1966, էջ 444:

Ի դեպ, խնդիրը բոլորովին էլ երիտասարդ դերասանի տաղանդավոր լինել-չլինելը չէր, այլ այդ առիթով հայկական ինքնության մեջ անզսպորեն դրսևորված արատավորությունը՝ չարախոսել-վարկաբեկելու եռանդը: Դրա նկատմամբ նույն-քան բորբոքուն է նաև Հովի. Թումանյանի անհանդուրժողականությունը, որում նա ի տեղին բառապաշարի գործածությամբ որքան իմաստնախոս է, նույնքան էլ հրապարակավ մարտնչող. «Աչքերն արյուն կոխած, հանդուգն ու համառ, հաստ ճակատը դեմ արած հարձակվում է նա (բթամտությունը - Ս. Ա.) անհաշտ ու անդադար: Մի անգամ վրդովվել, վեր է կացել, այլևս դժվար է նրան զսպել: Ջղջում, ամոթ, խղճահարություն... էլ ոչ մի բան ետ չի պահիլ նրան, մինչև զոհի շունչը չկտրի, չխեղդի, որ հանգստանա» (6, 111):

Նման խիստ որակումների պակաս Հովի. Թումանյանի հրապարակախոսու-թյունը չունի: Սակայն ավելի էական է այն, որ այս ամենի մեջ դժվար է գտնել մի դեպք, որը չափազանցության, միտումնավորության կամ սուբյեկտիվության դրսևորում լինի: Իր բանավեճերում և տեսակետներում նա բաց է ու շիտակ: Դա մարդկային նկարագրի և իմացական ուժեղության դրսևորում է: Հաճախ, չնայած ակնհայտ էմոցիոնալ-կրքոտ խոսքին, նա հավասարակշիռ, առանց չափազանց-ությունների ու ռացիոնալ բանավիճող է:

Ասելիքի առումով ևս հրապարակախոս Հովի. Թումանյանը սակավախոս է և տեքստի հենց սկզբից ըստ էության է նույնքան, ինչքան որ է չափաժողում կամ ար-ծակում: Նրա հոդվածների մեծ մասը չի անցնում գրքային երկու-երեք էջի սահմա-նը, իսկ հաճախ մի էջ էլ չէ, բայց խնդրի հստակ և միանշանակ առաջադրումով, ասելիքի պարզ ու որոշակի ձևակերպումով այնքան, որ հեղինակի միտքը տարա-կարծության տեղ չի թողնում: Այդ տեքստերում նա, տեսակետ շարադրելուն, իր համար անընդունելի մերժելուն զուգահեռ, ակնհայտորեն ուսուցանող է՝ երբեմն կրքոտ, երբեմն համբերատար: Եվ այդ ամենը՝ միայն իրեն բնորոշ գեղարվեստա-կան խոսքի պատկերավորությամբ, փաստարկվածությամբ, կենսավորձային ի-մաստնության համառոտ ու դիպուկ բանաձևումներով, ամենքին մատչելի խոսք ու զրույցի ոճավորումով և այլն: Դրանից էլ՝ այդ տեքստերի ընթերցման այն թեթևությ-ունն ու տպավորիչ հաճույքը, որոնք ևս Հովի. Թումանյանի անկրկնելի ինքնության դրսևորումներն են:

3. Հայի ինքնության արատները և դրանց պատճառները

Ինքնությունը ժամանակի ընթացքում պատմականորեն ձևավորվող անշփո-թելի իրողություն է: Այն կուտակային (ակումուլյացիոն) գործընթացի արդյունք է՝ ճանաչելի ըստ կոնկրետ դրսևորումների, և օժտված է վերարտադրվելու հզոր ի-ներգիայով, ինչն էլ պատմականորեն կայացածի շրջանակներում տվյալ համա-

կեցության շարունակականության երաշխիքն է: Այդ շարունակականությունն իրականացնող մասսան սովորաբար անտեղյակ է ինքնությունը որոշակիացնող որակների բացատրություններին, բայց այդ որակների ակտիվ կրողն ու վերարտադրողն է այնքան ժամանակ, քանի դեռ չի գործել վերանայումների անհրաժեշտության կենսական պարտադրանքը: Ինքնությանը վերաբերող անխուսափելի խնդիրը հենց այն է, որ այն անփոփոխ մնալով չի կարող անհրաժեշտ չափով արդյունավետ լինել, մանավանդ՝ սկզբունքորեն փոխված կենսական հանգամանքներում: Հարափոփոխ կյանքը չի հանդուրժում ինքնության կայունությունն ու կենսունակությունն ապահովող պահպանողականությունը:

Սակայն նույնիսկ որոշակի տրանսֆորմացիայի ենթարկվելով էլ ինքնությունը պահպանում է իր էության այն նվազագույնը, որի կորուստը կհանգեցնի այն կրողի չգոյությանը: Ինքնությունը ձևավորում է ավանդականացած, ռացիոնալ ռեֆլեկսիայի չենթարկվող համակեցական մասսայական նկարագիր ու վարքագիծ, որի արդյունքում սովորական և նույնիսկ պահանջված է դառնում որևէ հատկանիշով բնութագրվող կենսակերպը: Ընդ որում, դրա նույնիսկ օգտակար կամ վնասակար լինելուց անկախ, ճիշտ ըստ Բ. Ռասսելի ասածի, թե մարդկանց մեծ մասն ավելի շուտ պատրաստ է մեռնելու, քան մտածելու, ինչն էլ հաճախ պատահում է¹⁷:

Ինքնության ձևավորման ընթացքում կայանում են նաև տվյալ մշակույթի արքեոտիպերը (Կ. Յունգ) և դրանց հետևությամբ՝ այդ ինքնության կրողը լինելու գիտակցումն ու տիպային վարքագիծը: Ի վերջո, ազգային ինքնությունն անհատի և համակեցության ինքնագիտակցման բովանդակությունն է: Գիտակցաբար թե ենթագիտակցորեն դա անխուսափելի ընտրություն է, որովհետև կեցությունն անդեմ լինել չի կարող, իսկ որոշակիությունը հնարավոր է միայն ինքնության բովանդակությամբ:

Ինքնությունը ազգի բրենդն է, որը միայն էթիկա, բարոյական նորմեր, կենցաղ, ժողովրդական ստեղծագործություն, կիրառական-դեկորատիվ առարկաների յուրօրինակության համախումբ չէ: Այն ենթադրում է մշակութային նկարագրի գերակայող միասեռություն, որն ունի որոշակի էթնիկ նկարագիր: Ինքնությունն ազգային ինքնօրինակ նկարագիր է՝ էտալոն, որի հետ համադրություն-նույնականացումը (իդենտիֆիկացիա) որոշակիացնում է յուրաքանչյուրի կամ խմբի ազգային պատկանելությունը:

Սակայն ընդհանուր առմամբ իմանալի այս և այլ բնութագրերն անգամ հնարավոր չեն դարձնում ազգային ինքնությունը սահմանել այնպես, որ նրա իմաստային դաշտը որոշակիորեն տարբերակվի հարակից-հոմանիշ այնպիսի հաս-

17 [St u ru.citaty.net/avtory/bertran-rassel/](http://St.u.ru.citaty.net/avtory/bertran-rassel/) (մուտք 10.10.2019):

կացությունների իմաստային դաշտից, ինչպիսիք են, օրինակ, ազգային բնավորությունը, մենթալիտետն ու հոգեկերտվածքը, պատմամշակութային ու էթնիկական նկարագիրը և այլն:

Այսքանով հանդերձ, սակայն, պիտի նկատի ունենալ, որ անհամեմատ ավելի հեշտ են ազգային ինքնություն ձևավորող գործոնների իմացությունն ու մեկնաբանությունը: Թերևս հնարավոր է կարևոր-անկարևոր այդպիսի գործոնների մի ամբողջ խումբ թվարկել, որով խնդիրն ինչպես տեսական, այնպես էլ կոնկրետ դրսևորումների մակարդակներում քննելի է դառնում տարբեր գիտությունների տեսանկյուններով: Բայց գործոնների այդ բազմազանությունից անպայման առանձնանում են երեքը՝ աշխարհագրականը կամ բնակլիմայական պայմանները (աշխարհագրական դետերմինիզմ), ազգերի միջմշակութային հարաբերությունները և ժամանակի ընթացքում գոյացած կենսափորձի իմաստավորումը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ ինչպես տասնիններորդ դարավերջին և քսաներորդ դարասկզբին, այդպես էլ հետխորհրդային տասնամյակներում հայ հասարակագիտական միտքը (փիլիսոփայություն¹⁸, պատմագիտություն¹⁹, հոգեբանություն²⁰, ազգագրություն²¹ և այլն) նկատելիորեն ակտիվացել է ազգային ինքնության խնդիրների քննարկման մեջ: Երկու դեպքում էլ հայկական իրականությունը սոցիալ-քաղաքական լուրջ փոփոխությունների մեջ էր, որոնք կամա թե ակամա վերաձվել էին ազգային ինքնության կենսունակության լրջագույն փորձարկման:

Հովհ. Թումանյանը ժամանակի առաջադրած խնդիրը քննել է «էկեկտիկորեն ձևավորված»²² իր աշխարհայացքի շրջանակներում, «որում **աշխարհագրական դետերմինիզմը, կուլտուրապատմականության սկզբունքը, էվոլյուցիոնիզմի տեսությունը միահյուսվել են համատիեզերական բարեշրջության իմաստասիրական հիմնավորումներին**»²³ (ընդգծումը հեղինակինն է - Ս. Ա.): Իսկ, ըստ աշխարհատեսության այդպիսի դիտանկյան, «Ազգի քաղաքական հզորության գործոնն այս համատեքստում էական չէ, քանի որ զուրկ է համամարդկային, համատիեզերական բարեշրջության հյուսվածքում դրսևորվելու, գործառվելու ներուժից: Կենսակերտումի տիեզերական բարեշրջության ֆերմենտը՝ խմորիչը և շինանյութը մշակութային, բարոյական արժեքներն են, էթնոսի **ստեղծագործ** (ընդգծումը

18 Տե՛ս **Պերդյան Հ.**, Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ, Եր., 2005: **Հարությունյան Էր.**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր., 2004, Մարդկային կեցության այլակերպումները, Եր., 2018: **Հարությունյան Ս.**, Հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիսոփայությունը, Եր., 2014: **Ջաբարյան Ս.**, «Մահ կամ ազատություն» երկընտրանքը հայոց ինքնության մեջ, «ԲԵՀ», փիլիսոփայություն, հոգեբանություն, Եր., 2018, հատ. 3, էջ 30-42, **Գուրգեն Մահարու** «Հայկական բիրզադ»-ը ազգային ինքնության համատեքստում, «ԲԵՀ». փիլիսոփայություն, հոգեբանություն, Եր., 2018, հատ. 2, էջ 32-46, «Մենք»-ի և «Նրանք»-ի կերպարները հայկական էպոսում, «ԲԵՀ». փիլիսոփայություն, հոգեբանություն, Եր., 2018, հատ. 1, էջ 12-28 և այլն:

19 Տե՛ս **Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Եր., 2012: **Նույնի** Պատմության հետազոտող, Եր., 2014:

20 Տե՛ս **Նալչաջյան Ա.**, էթնիկական հոգեբանություն, Եր., 2001:

21 Տե՛ս **Մարության Հ.**, Հայ ինքնության պատկերագրությունը, Եր., 2009:

22 **Ալեքսանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 87:

23 Նույն տեղում:

հեղինակին է - Ս. Ա) կարողությունները»²⁴: Ի միջի այլոց, Հովհ. Թումանյանի աշխարհայացքին բնորոշ այս իրողությունը մի անգամ չէ, որ մատնանշվել է: Որպես օրինակ՝ բերեմ Հ. Բայադյանի դիտարկումը. «Թումանյանի հայացքները շատ հարազատ են այն մոտեցմանը, որ ժամանակակից տեսության մեջ ստացել է «մշակութային ազգայնականություն» անունը, և որի արմատները ձգվում են մինչև Հերդերի ժամանակները: Ի տարբերություն «քաղաքական ազգայնականության», «մշակութային ազգայնականությունը» ձգտում է հանրության հոգևոր վերածննդի՝ համարելով պետությունը երկրորդական գործոն...»²⁵:

Հետևաբար ազգի ոչ միայն գոյության, այլ նաև զարգացման ամենավստահելի երաշխիքը հոգևոր-մշակութային ներուժի ակտիվացումն է՝ հընթացս ազատագրվելով ինչ-ինչ հանգամանքներում կուտակված արատներից: Ահա թե ինչու էր Հովհ. Թումանյանը կենտրոնացել հայի ինքնության քննության ու հատկապես նրան բնորոշ արատների բացահայտման ու ընդգծման վրա: Այդ ամենը նա իրականացրել է գլխավորապես երեք տարբերակումով՝ հայի ընդհանրական՝ համահավաք ինքնությունը, հայ ժողովրդի ինքնությունը, հայ մտավորականի ինքնությունը:

Ազգային համահավաք ինքնության խնդրով Հովհ. Թումանյանի՝ տեսական բովանդակությամբ նշանակալի հրապարակումներից մեկը «Մեծ ցավը» (1909) հոդվածն է: Այդ նյութի վերնագրի շեշտադրումը պայմանավորված է նրա նախորդ հրապարակմամբ՝ «Թյուրիմացության մութի մեջ» (1909), որը վերաբերում է հարևան ժողովուրդների՝ իրար չճանաչելու պատճառով «ցավալի թյուրիմացությունների մեջ» (6,174) ընկնելու վտանգին: «Մեծ ցավը» հոդվածում նա արդեն շեշտադրում է նույնքան ակնառու, բայց շատ ավելի ցավալի ու ամոթալի ճշմարտություն, որը հետևյալն է. «Մենք մեզ էլ չենք ճանաչում»²⁶: Երկիր ունենք - չենք ճանաչում, պատմություն ունենք - չենք ճանաչում, ժողովուրդ ունենք - չենք ճանաչում, գրականություն ունենք - չենք ճանաչում, լեզու ունենք - չենք իմանում» (6,174):

Ահա այսպես՝ հնարավորինս սեղմ ու կոնկրետ դիտարկումով Հովհ. Թումանյանն առանձնացնում է ազգային ինքնություն ձևավորող գործոններն ու դրանց չիմացությամբ պայմանավորված՝ հայկական իրականության աղետալի վիճակը: Արձանագրելով ցավալի իրողությունը՝ նա ճշգրտորեն մատնանշում է ազգային ինքնությունը ձևավորող գործոնները և դրանց գիտական իմացության հրատապ անհրաժեշտության հարցը: Նրա բացատրությունները նաև մշակութաբա-

²⁴ Նույն տեղում, էջ 90:

²⁵ Բայադյան Հ., նշվ. աշխ., էջ 29:

²⁶ Հ. Բայադյանը Հովհ. Թումանյանի այս միտքը «ինքնաճանաչում (ինքնագիտակցում)», «մենք» և «մեզ» բառի մաստնների ընդգրկման շրջանակներում թեև համառոտ, բայց հետաքրքիր դիտարկման նյութ է դարձրել (տես Բայադյան Հ., նշվ. աշխ., էջ 35):

նական ժամանակակից գիտելիքի առումով են անառարկելի: Օրինակ՝ հայտնի իրողություն է յուրաքանչյուր մշակույթում (մանավանդ՝ ծագման ու ձևավորման շրջանում) աշխարհագրական գործոնի կարևոր ազդեցությունը: Եվ ահա թե ինչպես է Հովի. Թումանյանը փաստարկում գիտական այդ ճշմարտությունը. «Չէ՛ երկիրն է իր առանձնահատկություններով, որ պայմանավորում է ու բացահայտում և՛ պատմություն, և՛ գրականություն, և՛ գեղարվեստ, և՛ տնտեսական վիճակ, և՛ մարդկային հայտնի տիպ ու հոգի: Նա է որոշում ազգերի ճակատագիրը, առանց նրա բովանդակությունը հասկանալու, ո՛չ կարող ես անցյալը ըմբռնել, ո՛չ ներկադ հասկանալ, ո՛չ ապագադ տնօրինել» (6,174):

Հաջորդ գործոնին՝ պատմությանը, Հովի. Թումանյանն անդրադառնում է ավելի մանրամասն՝ այստեղ ևս ընդգծելով համատարած չիմացությունը. «Չգիտենք մենք ինչ ենք եղել, ինչ ենք արել, ինչու և ինչպես, ինչ օրով, ինչ ճանապարհով ենք էստեղ հասել» (6,174): Եվ այդ չիմացությունն է, որ ծնում է երկակի չարիք՝ **ստորաքարչ թերարժեքություն** կամ **սնապարծություն** (ընդգծումը մերն է - Ս. Ա.): Վերջինի դեպքում նա ընդգծում է պատմական անցյալը կեղծել-շահարկելու այն փաստը, որը հայտնի է որպես պատմություն ոչ թե ըստ եղելության, այլ եղելության առիթով, ինչը կարող է բոլորովին էլ չհամընկնել եղելությանը: Այդ վարքագիծը կրողին նա այսպես է ներկայացնում. «...կույր ազգասիրական տենչով բռնված չեղած մեծություններ ու փառքեր կզառանցի՝ հասկացողություններ, ժամանակներ ու դեպքեր իրար խառնելով...» (6,175): Այդ ամենի արդյունքում ազգային իրական ինքնության պարզաբանման փոխարեն ձևավորվում ու մատուցվում է մտացածին բնութագրերի մի խառնաշփոթ, որի թումանյանական բնութագիրը շատ է դիպուկ. «Եվ մինչև էսօր չիմացանք ու չգիտենք, թե ինչ բան է էդ խորհրդավոր սֆինքսը (նկատի ունի հայ ժողովրդին - Ս. Ա.), որ տխուր նստած է Ուրարտուի հին արձանագրությունների կողքին՝ աչքերն արցունքով ու վշտով լիքը» (6,175):

Մշակույթի ինքնությունը ձևավորող կարևորագույն գործոններից մեկն էլ տվյալ սոցիոմի կենսափորձն է՝ իր գլխով անցածը, ավելի ճիշտ՝ այդ փորձի իմաստավորումը: Նախորդ գործոնի համեմատ սա ավելի նշանակալի է թեկուզ և այն առումով, որ տվյալ սոցիոմի իմացությունն այսպես թե այնպես ընդգրկում է նաև աշխարհագրական հանգամանքների ու միջմշակութային հարաբերությունների արդյունքում ձևավորված կենսափորձը: Ի վերջո, դրանք ևս սոցիոմի կենսափորձի մեջ առկա եղելություններ են, ինչպես այն ամենը, ինչը ներկայացվում է որպես պատմաքաղաքական իրադարձությունների շղթա:

Ազգային ինքնություն ձևավորող այս երրորդ գործոնի ըմբռնումը պահանջում է որոշակիորեն տարբերակել պատմական եղելությունները (իրադարձությունները) և դրանց իմաստավորումը:

Փորձը ցույց է տալիս, որ տվյալ համակեցության գլխով անցած եղելություն-իրադարձություններն իսկապես կարևոր են, բայց ավելի կարևոր է այն, թե դրանք ինչպես են իմաստավորվում, ինչ նշանակությամբ են գործադրվում իրական կյանքում: Եվ այստեղ հետաքրքիրն այն է, որ եղելությունները ոչ այնքան փաստացի, որքան իրենց վերագրված իմաստավորումներով ու նշանակությամբ են դառնում ընթացիկ և ապագա կենսագործունեության ակտիվ կողմնորոշիչ գործոններ, այդպես՝ նաև մասնակիցներ: Սա մարդու հոգեմտավոր գործունեության հետաքրքիր իրողություններից մեկն է, որը կարելի է անվանել անցյալի վերստեղծում-վիրտուալացում կամ պատմական հիշողության ձևավորում, որն էլ որոշակիացնում է համակեցության ամենօրյա գործնական կյանքի բովանդակությունը: Եվ ահա թե ինչպես է դա տեղի ունենում:

Մարդն ամեն ինչ գիտի այնպես, ինչպես ներկայացվում է խոսքով: Իսկ եղելություններն իմանալի են միայն այնքանով և միայն այն բովանդակությամբ, ինչքանով և ինչ բովանդակությամբ խոսքի են վերածվում: Գիտակցության մեջ եղելության գոյակերպը խոսքային է և՛ իբրև փաստ, և՛ իբրև բովանդակություն՝ ուսանելի կենսափորձ: Իսկ եղելության խոսքային՝ բանավոր կամ գրավոր պատմվող տարբերակը՝ պատմությունը, ամբողջությամբ կարող է նույնիսկ էականորեն տարբեր լինել իրականությունից: Եվ դրա արդյունքում հաճախ ստացվում է եղելության առիթով, լավագույն դեպքում եղելության անցուդարձով պատմվող մի բան, որի բովանդակությունը շատ հեռու է իրականությունից: Այդպիսի վերաիմաստավորումներն ունեն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, բայց երկուսի դեպքում էլ նպատակը մեկն է՝ առկա փորձի իմաստավորմամբ լուծումներ գտնել ընթացիկ խնդիրների համար:

Այդպես ձևավորվում է ժամանակի պարզ գծային կառույցի (անցյալ-ներկա-ապագա) բովանդակությունը, որում անցյալն ակտիվորեն մասնակցում է ներկային ու անգամ կանխորոշում գալիքը: Դա տեղի է ունենում մարդկանց գիտակցության մեջ ամրակայված արժեքների, կենսական կողմնորոշիչ վարքագծի, ի վերջո՝ աշխարհայացքի միջոցով: Դրա արդյունքում ստեղծվում է հետևյալ իրավիճակը: Անցյալից այն ամենը, ինչը մարդը համարում է իր ինքնության առումով էական, շարունակում է մասնակցել ներկային: Անցյալով բովանդակավորված մարդկային հիշողության դաշտը որոշակի ռեալություն է, որին բնորոշ է ընտրությամբ գոյացած արժեքների համախմբի կենսական ակտիվությունը: Կենտրոնանալով այս անվերջ շրջապտույտը, կախված բովանդակությունից, տվյալ

հանրության համար կարող է ձևավորել կենսունակի կամ դատապարտվածի ինքնություն²⁷:

Անցյալը և՛ անհատի, և՛ ազգի ճակատագրում միշտ առկա է, գիտակցված թե՛ չգիտակցված տարբերակներով մասնակցում է ներկայի ընթացքին ու կեցության բովանդակության ձևավորմանը, այդպես՝ նաև գալիքի ձևավորմանը, որովհետև ապագան, ինչպես ճիշտ նկատվել է, ոչ թե այն է, ինչը գալու է վաղը և դրանից հետո, այլ այն, ինչ մարդն անում է ներկայում: Հետևաբար ճիշտ չեն այն պնդումները, թե ժամանակակից մարդն իրեն պահում է այնպես, որ իբր զուրկ է պատմական հիշողությունից: Իհարկե բոլորը չէ, որ ամենայն մանրամասնությամբ կամ գոնե դպրոցական տարրական գիտելիքի սահմաններում գիտեն անցյալը: Բայց բոլորն այս կամ այն կերպ յուրացնում են պատմության (եղելության վերաբերյալ կամ դրա առիթով պատմվածի) դասերը և ձևավորում համապատասխան մտածողություն ու վարքագիծ: Ահա հենց այդ դասն է, որն անցյալն ինչպես լավագույնս, այնպես էլ աղավաղված իմացողին կողմնորոշում է կամ ազգային ինքնությունը պահպանելուն, կամ՝ դրանից ազատագրվելուն:

Ի վերջո, ցանկացած ազգի ինքնությունն ընթացիկ կամ ռետրոսպեկտիվ ռեֆլեքսիայով եղելության իմաստավորման (բանավոր կամ գրավոր պատմություն), արժեքների սելեկցիայի ու ամրապնդման արդյունք է, որը հետագայում սերնդեսերունդ փոխանցվում ու ամրապնդվում է: Այսպես ձևավորվում են ցանկացած մշակույթի սիմուլյակրները, որոնք ինչ-ինչ իրողությունների մասին են ու առիթով, բայց չեն արտացոլում այդ իրողությունների բուն բովանդակությունը:

Նկատի ունենալով ողջ ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ ինքնության ձևավորման սկզբունքը նկատելիորեն կոլաժային-ստեղծագործական է, իսկ արդյունքը՝ ոչ այնքան փաստարկված, որքան մտակառույց: Այստեղ ամենակարևորը թերևս մտավորականների դերն է. նրանք են սիմուլյակրներ ստեղծում, տարածում ու ամրակայում, նաև՝ կրթում, ուղղորդում, առաջնորդում ելնելով ռեալության գիտական իմացությունից:

Ճիշտ այսպես էլ Հովհ. Թումանյանն իմաստավորում է պատմության և դրա իմացության նշանակությունը, որում դրսևորվում է իր հրապարակախոսության կարևորագույն արժանիքներից մեկը՝ գիտականությունը: Իր օրերի մտավորականների վերաբերյալ նրա և՛ քննադատությունը, և՛ մի քանիսի դեպքում հիացմունքը պայմանավորված են սոցիալական այդ շերտին իր վերապահած առաքելությամբ:

Նույն հողվածում («Մեծ ցավը») շարունակելով իր սկզբունքային ու անկեղծ խոսքը՝ Հովհ. Թումանյանը ցույց է տալիս, որ իրավիճակը նույնքան անմխիթար է

²⁷ Այս իրողությունն ավելի մանրամասն ներկայացված է մեր «Եղելություն, պատմություն և ազգային ինքնագիտակցություն» հոդվածում (տես «Վեմ» համահայկական հանդես, Եր., 2011, N 2):

հայի ինքնության, նաև հոգևոր արժեքների՝ լեզվի ու գրականության իմացության դեպքում: Իսկ այդ ամենից եզրակացությունը ցավալիորեն միայն հետևյալը կարող է լինել. «Էսպես է դրությունը: Եվ եթե ճշմարիտ էսպես է, սրանից հետո էլ ինչ ուղիղ ճանապարհի կարող է լինել էս դրության մեջ գտնվող ժողովուրդը, ինչ արժանապատվության զգացմունք կարող է ունենալ և ինչ հարգանք հենց դեպ իրեն: Եվ ինչպես կարող է պատահել, որ մեզ սիրեն ու հարգեն օտարները, երբ պարզ տեսնում են, որ մենք որպես առանձին ժողովուրդ չունենք ինքնուրույն պատկեր ու բովանդակություն և հանդիսանում ենք միմիայն իր աղավաղումը» (6,176): Եվ արդեն մի այլ առիթով առաջադրում է ինքնաճանաչման անհրաժեշտության ու դրա հնարավորության խնդիրը. «Բայց մեր ուժերից վեր հո չի նայել, քննել, ճանաչել մեր երկիրն ու էսօրը» (6,194): Եվ դրանում շեշտում է հենց մտավորականների պարտավորությունը, որովհետև նրանք պիտի որ տարբերվեն «խավար բազմությունից» (6,194): Նշանակալի է նաև այն, որ Թումանյանը հայի ոգու, պատմական ուղու և գոյության խորհրդի վերաբերյալ իր հարցադրումների պատասխանը, ինչպես ինքն է նշում, չի ակնկալում միշտ որոշակի շահի հետապնդող կուսակցություններից կամ լրագրերի խմբագրակազմերից:

Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ հայի համահավաք ինքնության վերաբերյալ Հովհ. Թումանյանի հարցադրումներում մշտապես առկա են մեր պատմական ճակատագրի խնդիրն ու գործոնը: Նա հստակ գիտակցում էր, որ չի կարող լինել ազգային նկարագիր՝ անկախ ապրված ու վերապրված (ռետրոսպեկտիվ վերաիմաստավորում) պատմական իրողություններից: Դրա համար էլ պարզորոշ ցույց էր տալիս ազգային նկարագրի արատների առաջացման պատճառները: Այդպիսի անդրադարձներից մեկն էլ «Դառնացած ժողովուրդ» (1910) հոդվածն է, որում նա քննարկման նյութ է դարձրել հայկական համակեցությանը բնորոշ համընդհանուր չարության պատճառը և առանձնահատուկ կերպով կարևորել մեր անցած պատմական ուղին՝ այդ «զարհուրելի ծնողը», որը «երկար դարերով մեզ դրել է բարբարոս ժողովուրդների ոտների տակ» (6, 224): Պարբերաբար նվաճված լինելու մեջ ևս մեր մեղքը պիտի տեսնել, բայց այս դեպքում Հովհ. Թումանյանը քննում է ոչ թե այդ փաստի պատճառները, այլ հպատակեցվածության անցանկալի ներգործությունները հայ մարդու հոգեկերտվածքի վրա:

Դիտարկված խնդրի մեջ ենթաշերտեր բացահայտելու և նրբերանգներ ցույց տալու առումով սա Հովհ. Թումանյանի ամենաուշագրավ հոդվածներից մեկն է: Նա ընդգծում է նկարագիր դարձած արատի՝ չարության ընդհանրականությունը և պատճառը, բայց միայն դրանով չի սահմանափակվում: Նրա հաջորդող դիտարկումը համակեցական փորձի ու մարդիմացության կարևոր ընդհանրացում է: Նա անառարկելիորեն պնդում է, որ համազգային այդպիսի աղետալի ներքին նկա-

ՎԷՄ ՀԱՄԱՆԻՍՅԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ, ԺԿ 4 (68), ԽՈԿՄԱՆԻՔԻ ՊԵՂՄԱՆԻՔԻ, 2019 ՎՐԱԿԱՆԱԿՏՈՒԹՅՈՒՆ

րագրով եթե նույնիսկ ինչ-ինչ հաջողություններ էլ արձանագրվեն, միևնույն է, դրանք լինելու են դատապարտված «ճիճվի կերած պտղի նման» (6, 225): Իրավիճակը չեն կարող փոխել անգամ տաղանդավոր մարդիկ, որովհետև «նրանք էլ կլինեն դառն ու դաժան» (6, 225): Պատճառն այն է, որ համազգային այդպիսի ներքին նկարագիրը «...չի կարող ծնել ազնիվ մարդիկ, բարի սրտեր ու բարձր ոգիներ, հենց էն, ինչը որ դարձնում է մի կյանք գեղեցիկ ու հրապուրիչ և մի ժողովուրդ թանկ ու համակրելի» (6, 225):

Ակնհայտ է, որ այս դեպքում նրա շեշտադրումը վերաբերում է ոչ թե շնորհալիին ու տաղանդավորին, այլ, այսպես ասած, համազգային բարոյական միջին նկարագրին, իր խոսքով՝ մեր ներքին մարդուն՝ ամեն ինչում և միշտ ընդգծված երևացող ինքնությանը. «Ճշմարտությունն էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությունով» (6, 223): Եվ որովհետև դա դարձել է իմանենտ՝ բնորոշ ներքին որակ («ներսից ենք փչացած» (6, 225)), ուրեմն լուծումն էլ այդ ներքին որակի գիտակցումն ու սկզբունքային վերանայումը պետք է լինի: Մի բան, որն այս դեպքում Հովի. Թումանյանը ճշմարտացիորեն ավելի է կարևորում, քան անհատ շնորհալիների առկայությունը:

Այսպիսի դիտարկումների արդյունքում է, որ Հովի. Թումանյանը հանգել է իրավիճակը բարվոքելու համար ինքնաճանաչման լավագույն միջոցներից մեկի հրատապ անհրաժեշտության մտքին, ինչի մասին ասել ու գրել է բազմիցս: Խոսքը վերաբերում է հայոց պատմության հրատարակության անհրաժեշտությանը, որի անտեսման պատճառով «Վաղուց է, որ նշանավոր դեպքերն իրար ետևից գալիս են ու աղաղակում, թե հայ ժողովուրդը չունի և չգիտե իր պատմությունը. չգիտի, թե ո՞վ է ինքը, ո՞րտեղից է գալիս և ո՞ր գնում: Հոգեկան ու մտավոր կուրության մեջ այս տեսակ ժողովուրդը անուղեցույց խարխափում է» (6, 355): Ողբալի վիճակն ակնհայտ էր: Իսկ անցյալի ու ներկայի անցանկալի նստվածքներից ազգային ինքնությունն ազատագրելու, ապագայի ճամփան հարթելու միջոցներից մեկն էլ, ինչպես ինքն էր համոզված, հայոց պատմություն ունենալն էր, ինչը կնպաստեր անցած ճանապարհի «իմաստն ու փիլիսոփայությունը» (6, 355), իր տեսակը, իր համար լավն ու վատը հասկանալուն:

Պիտի նկատի ունենալ, որ Հովի. Թումանյանն իր դատողությունների շրջանակը չէր սահմանափակում օրախնդիր հարցերով: Արձանագրելով առկա մտահոգիչ վիճակը («...միշտ առաջնորդվում ենք քամու հոսանքով, նախապաշարումներով ու թյուրիմացություններով...» (6, 254)) նա առաջադրում էր նաև հրատապ լուծում պահանջող խնդիրը: Մասնավորապես դեռևս «Բորչավում» (1894) ակնարկում Հովի. Թումանյանը խոսում էր ազգային գաղափարախոսության անհրաժեշտության մասին. «Այսքան դարեր ապրած, ծերացած ժողովուրդ և դեռ

... չի ստեղծել մի անհատական – զուտ ազգային կյանքի օրենք – ադաթ, որ ավանդեր յուր որդուն» (6, 44-45):

Առկա խնդիրների լուծման մեջ նա կարևորել է գրողների, գիտնականների, հրապարակախոսների, նույնիսկ գրականությունը սիրողների ու երիտասարդների դերը (6, 389): Մի շարք այլ առիթներով էլ շեշտել է դպրոցի, կրթության ու գրականության նշանակությունը (օրինակ՝ «Դպրոց և գրականություն», 1913):

Հրապարակախոսության մեջ էլ Հովհ. Թումանյանը կենսական իրողությունները յուրովի իմաստավորող նույն ստեղծագործողն է: Օրինակ՝ ազգային ինքնության արատների և՛ մակերեսային, և՛ խորքային դրսևորումների այդքան մատնանշումներից հետո իրեն բնորոշ սրամտությամբ անում է պարադոքսալ գյուտ՝ տխուր մտորումներ ուրախ առիթով («Մի՞թե դժվար է», 1913): Եվ միանգամայն բնական է նրա տխուր խորհրդածությունը. «Մի՞թե ... մենք էնքան ենք զուրկ առաքինություններից, որ մի լավ գործի մեջ էլ իրար կողքի կանգնելն ու միասին ուրախանալը պետք է էսքան մեզ զարմացնի ու էսքան ուրախացնի» (7, 7): Հարցումը հռետորական է, որովհետև նա լավ գիտեր կյանքի փորձով ձևավորված դառը ճշմարտությունը. «Մենք շատ ենք քարացել չկամության ու չարակամության մեջ, շատ ենք ընտելացել ատելության մաղձի դառնությանը ու դարձել ենք ատելի» (7, 8): Մինչդեռ Հովհ. Թումանյանն ուներ ապրելու իր բանաձևը և նույնն էլ պատգամում էր պատանի գրասերներին. «Արևի նման նայեցեք աշխարհին» (7, 33):

Իրականության մասսայական արատավորությունը ներկայացնող հրապարակախոսական լավագույն օրինակներից է «Անկեղծ չենք» (1907) հոդվածը: Փոքրածավալ այս տեքստում ներկայացվածը կարող է վերաբերել ցանկացած ժամանակի ու ցանկացած համակեցության: Դա պարզ երևում է հոդվածի սկզբում, որտեղ շեշտադրվում է արատների ծավալմանը նպաստող իրավիճակը՝ ժամանակի հեղափոխական-խառնակ անորոշությունը: Բայց եթե դա ողջախոհին ու ազնիվին պարտավորեցնում է գիտակցել իրադրության լրջությունը, որովհետև «...շարժումը կամ խոսքը կարող է ունենալ այնպիսի հետևանք, որ ուրիշ ժամանակ աներևակայելի է» (6, 150), ապա պարզվում է, որ պատեհապաշտը հենց խառնակ կենսական հանգամանքների սպասումն է ունենում: Եվ որովհետև վերջիններս ավելի շատ են ու կյանքն ըստ իրենց նկարագրի ձևավորելու ակտիվացում էլ՝ անմրցելի, ստեղծում են մասսայական այլասերության մթնոլորտ: Դա նկատի ունենալով՝ Հովհ. Թումանյանն անում է խորաքանդակ ընդհանրացումներ բեմի վերածված կյանքի, անամոթաբար ինչ-ինչ դերեր ստանձնած շահախնդիր, ժողովրդի անունից բարբաջող դուրսպրծուկների վերաբերյալ: Եվ պատահական չէ, որ այդ համատարած կեղծիքի մեջ կյանքը կորցնում է իր հմայքն ու իմաստը, և «...դուք զգում եք, որ ցուրտ է, որովհետև չկա անկեղծության ջերմությունը, զգացմունքի հուրը...» (6, 151):

Մասսայական արատավորության դեմ Հովի. Թումանյանի վրդովմունքի դրսևորումներից մեկն էլ Ջատկի տոնի առիթով գրված «Մեծ և անմահ» (1911) հոդվածը եղավ: Այն նման է հասարակությանը վարակած ախտի դեմ հուսահատ բողոքի. «Չարություն, ստախոսություն, շահամոլություն, վրեժխնդրություն, վերջապես նեղ ցեղական ու կրոնական տեսակետներ...» (6, 309-310): Արատավոր միջավայրում ամեն ինչ է ներծծված այդ մթնոլորտով՝ սկսած ժողովրդից, շարունակած գրական կյանքով, մամուլով, մտավորականներով... Իսկ հակառակն այնքան քիչ է իր օրինակներով ու թույլ կարողություններով, որ ոչինչ չի կարող փոխել: Եվ միանգամայն հասկանալի է ազգանվեր մտավորականի ցավալի եզրակացությունը: Ստացվում է, որ Հիսուսն ամենուր և ամեն օր է խաչ հանվում, իսկ Ջատկի տոնը նշող այդ կենսակերպի մարդիկ նրա խաչելության կամ մասնակիցն են, կամ հանդիսատեսը (6, 310):

Հայ մարդու ազգային ինքնության թումանյանական դիտարկումների մեջ էական տեղ ունի արժանապատվության խնդիրը: Դրան նրա անդրադարձները երբեմն ուղեկցվել են վիրավորանքի ու զայրույթի անթաքույց դրսևորումներով: Մասնավորապես Հովի. Թումանյանը չի հանդուրժել խեղճությունն ու թշվառությունը հայի նորմատիվ նկարագրի էտալոն դարձնելը: Նրա համար ոչ պակաս անհանդուրժելի էր խեղճ ու թշվառ կենսակերպի վկայակոչումով մարդուն ավելի գնահատելի, մեծարելի դարձնելը՝ դրանով ասես ընդգծելու համար նրա ավանդական, բուն հայկական նկարագիրն ու կենսակերպը: Ազգային վարքագծի այդ առանձնահատկության դեմ նա գրել է հատկապես գրողների (Պ. Պռոշյան, Ա. Արասխանյան) մահվան առիթով գրավոր ու բանավոր մահախոսականների բովանդակությունից ելնելով: Դրան հակառակ՝ նա շեշտադրել է այդ մարդկանց արժանապատիվ պահվածքը, որով իրենց հետմահու այդպես «մեծարելու» առիթը և իրավունքը երբևէ չեն տվել:

Հովի. Թումանյանը լավ գիտեր, թե ումից ինչ է ակնկալում ու պահանջում, և հարկ եղած դեպքում էլ համարձակորեն, առանց նույնիսկ զգուշանալու արտահայտում էր իր անկեղծ կարծիքը հենց այն ժողովրդի վերաբերյալ, որի կյանքին ու հոգսին կարողացածի չափով ծառայելու մեջ էր տեսնում իր կյանքի իմաստը: Ահա դրա ապացույցներից մեկը. «...ժողովուրդը երբեք լավ չի հասկացել, այժմ էլ լավ չի հասկանում և միշտ էլ լավ չի հասկանալու: Նա միշտ նայել է իր մեջ զանազան միջոցներով անուն հանած գործիչների երեսին ու գնացել է նրանց ետևից, և վայ էն ժողովրդի մեղքը, որի գործիչները էնքան խղճմտանք չեն ունենալ, որ իրենց փոքրիկ անձերն ու կրքերը կդարձնեն հասարակության զբաղմունքի առարկա և իրենց չնչին անձնական հաշիվների շուրջը փոթորիկներ հարուցանելով կտան մեծ խնդիրների կերպարանք:

Վայ էն ժողովրդին» (6, 206):

Եվ ամբողջ ցավն այն էր, որ ժողովուրդ ասված համահավաքության այսպիսի ընդհանրական էությունն ավելի անմխիթար էին դարձնում ոչ միայն մեր պատմական ճակատագրի բացասական ներգործությունները, այլ նաև չիմացությունը, կեղծ հայրենասիրության պաթետիկայի հավելադրումները, դրանում շահախնդիր կուսակցություններն ու մտավորականները:

Պատահական չէ, որ Հովհ. Թումանյանը սկզբունքորեն մերժել է կուսակցական-քաղաքական այն գործիչներին, որոնք, ազգի ինքնությանը բնորոշը և մեր մշակույթի ոգին հասկանալու, նրանում եղած լավն ու վատը, ճիշտն ու սխալը տարբերակելու փոխարեն, շահարկել են էժան գաղափարներ՝ «իրենց համար առաջնորդի դիրք ու աթոռ ստեղծելու համար» (7, 139):

Այս ամենից չի կարելի ենթադրել, թե Հովհ. Թումանյանը մշտապես սևեռված է եղել մեր կեցության ու ինքնության միայն բացասական իրողությունների վրա: Ճիշտ հակառակը: Նա չի հուսահատվել ու չի դադարեցրել արատավորն ու մերժելին բացահայտելու հետ իրավիճակի առողջացման դեղամիջոցներ առաջադրելը և, որ շատ կարևոր է, շարունակել է ապրել ու գործել ըստ իր ասածի: Նաև հարմար առիթը բաց չի թողել՝ ընդգծելու համար ժողովրդի ու նրա տաղանդավոր ներկայացուցիչների վաստակի նշանակալիությունը: «Մեր կյանքի ու հոգու վրա» (7, 51) դարերի կուտակած «ախտ ու կեղտի» (7, 51) նկատմամբ Հովհ. Թումանյանի անհանդուրժողականությունը պայմանավորված էր ժողովրդին ու երկրին իր անմնացորդ նվիրումով, նրանում իր պատկերացրած վեհն ու վսեմը, բարեկեցիկ կյանքը տեսնելու ձգտումով, ինչը միանգամայն բնական էր կուլտուրական ազգի իր ուսուպիայի շրջանակներում: Իսկ երբ ներկայացել է տեղին առիթը, ինքն էլ հպարտությամբ ու ոգևորությամբ մատնանշել ու մեծարել է մեր ինքնության և մշակույթի մեջ արժեքավորը: Դրա օրինակներից է «հայ ազգի ազնվականության վկայական»-ի՝ մեր պոեզիայի նրա բնորոշումը. «...էդ էն վկայականներից է, որոնց վրա բնությունն ու աստված են դրել իրենց կնիքը» (7, 220):

Թեև Հովհ. Թումանյանը մեր ժողովրդի նյութական թշվառությանն անդրադառնալու առիթը բաց չի թողել, օգնել է նույնիսկ անհնարին թվացող տարբերակներով, բազմիցս շեշտել նյութական ապահովության կարևորությունն ազգային ցանկալի նկարագրի ձևավորման գործում, բայց հետաքրքիր է, որ ազգային ինքնության արատներից ազատագրվելու նրա առաջադրած միջոցները միագծորեն չեն խարսխվում նյութական կեցության առաջնայնության սկզբունքի վրա: Ավելի ակնհայտ է բազմիցս դրսևորված նրա այլ համոզմունք՝ ազնիվ, արժանապատիվ ազգային անհատական և համակեցական ինքնության հնարավորությունը՝ հակառակ նույնիսկ փորձանքներով, վատի, ստորի պատադրանքներով լի կենսական հանգամանքների: Նա համոզված էր այն ճշմարտության մեջ, որ մարդը

«հառաջադիմության», այսինքն՝ մշակութաստեղծ գործունեության արդյունք է, որի մեջ էական գործոնը գիտակցությունն է. «Բնությունը կենդանի է ստեղծել, մարդը հառաջադիմության արդյունք է» (7, 170): Ահա այս ճշմարտությունից ելնելով էլ նա հայի ինքնության, նկարագրի ու վարքագծի արատավորության մեջ շեշտում է մեր մեղավորությունը, հաճախ անհրաժեշտ կամք չդրսևորելը. «...հառաջադիմությունը ... մի աստվածային աշխատանք է, որ կատարում են ընտիր անհատներն ու ազգերը լավ մարդն ու լավ կյանքը ստեղծելու համար: Եվ անհատը կամ ազգը ինչքան ազնիվ է՝ էնքան էլ շատ է նախանձախնդիր հառաջադիմության ճանապարհը շուտ բռնելու...» (7, 170-171):

Հրապարակախոսության մեջ ևս Հովի. Թումանյանը նույն լայնախոհ ու խորաթափանց կենսագետն է: Նա չի անտեսել այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը մշտապես զբաղված է եղել «գլխապահության հասարակ խնդրով» (7, 171): Բայց արտաքին ու ներքին անբարենպաստ հանգամանքները Հովի. Թումանյանը չի դարձրել արդարացման փաստարկ: Ընդհակառակը, շեշտել է, որ դրանք մեզ պիտի «ստիպեին, որ լինեինք ավելի զգույշ, զգաստ, շրջահայաց ու իմաստուն» (7, 507): Մինչդեռ եղել է ճիշտ հակառակը: «...Մենք թե դրսից, թե ներսից քանդեցինք մեր երկիրը: Գլխավորապես մենք: ...Էսքան աղետների ու պարտությունների մեջ ոչ մի մեղավոր չերևաց, ոչ ոք ոչ պատասխանի կանչվեց, ոչ պատասխան տվեց», - այսպես էր նա գնահատում դարասկզբի իրադարձությունները 1921 թ. դեկտեմբերի 9-ին Կ. Պոլսում Ավ. Իսահակյանին գրած նամակում: Նրա գնահատականների սկզբունքայնությունն ու անկեղծությունը չունեն սահման ինչպես ճշմարտախոսության, այնպես էլ սեփական վրդովմունքի ու հուսահատության դրսևորումներում. «Սա ազգ չի, ժողովուրդ չի - խայի է, խաժամուժ, խուժան, որ իր լավ թե վատ ցույցերով երբեք լուրջ գնահատող չի...» (10, 191):

Բազմաթիվ են դեպքերն ու առիթները, երբ Հովի. Թումանյանը խստորեն քննադատել է մտավորականներին՝ չհանդուրժելով նրանց բնորոշ պախարակելին: Եվ դա էլ՝ դարձյալ հանուն զարգացած հոգևոր կեցության: Մասնավորապես նա չի հանդուրժել մտավորականների մի խմբին վարակած «մուրացկանի և լալկանի տգեղ» (6, 387) նկարագիրը: Թեև կենսական դժվար հանգամանքներում, բայց հանուն արժանապատիվ պահվածքի էր նրա գնահատականների խստությունը, որովհետև այդ արատը դարձել էր վարակիչ («Մեր մարդը սիրում է խեղճությունն ու լացը և զարդարվում է նրանցով») ու, «...միանալով ուրիշ բացասական հատկությունների հետ, ցեղի տիպը դարձնում է շատ անսիրելի» (6, 387):

Իհարկե անմխիթար էր իր օրերի մտավորականների վիճակը, բայց նա ոչ թե անտեսում էր առկա խնդիրը, այլ շեշտադրում նույնիսկ այդպիսի կենսակերպում հարգանքի արժանի պահվածքի անհրաժեշտությունը: Սակայն դրանով

չէր սահմանափակվում և մտավորականի կեցության հարցը դիտարկում էր հայկական իրականությանը բնորոշ մեկ այլ ցավալի ճշմարտության տեսանկյունից. «Դժբախտությունն այդ չի (գրողի սոցիալական վիճակը - Ս. Ա.), այլ այն, որ գրականությունն ապրուստ չի տալիս գրողին...» (6, 155):

Հովհ. Թումանյանն անհանդուրժելի է համարել այն իրողությունը, որ «խավար, գոռիկ բազմության» (6, 346) վարքագծին հատուկ արատավորությունը նույնությամբ տարածված է նաև մտավորականների շրջանում: Չի խուսափել իր բնութագրերի իսկությունը կոնկրետ անուններով ու գործերով փաստարկելուց: Բայց չի սահմանափակվել միայն դրանով ու արել է ավելի ընդգրկուն ընդհանրացումներ՝ ցույց տալով մտավորականների կենսակերպին և արարքներին բնորոշ արատների հասարակական բացասական հետևանքները. «Եվ տապալում ու խորտակում են (բանավիճող մտավորականները - Ս. Ա.), բայց ոչ թե իրենց հակառակորդին, այլ հավատը մարդկանց մեջ, հավատը դեպի մարդն ու մարդու ազնիվ խոսքը, դեպի գործիչն ու գործը, դեպի գրվածքն ու գրողը» (6, 346): Մինչդեռ մտավորականներն են, որ պետք է «խաղաղ, օբյեկտիվ, գիտական, քննադատական լուրջ վերլուծումներով ու խորասուզումներով տանեն դեպի ազգային պայծառ ինքնաճանաչողություն և ընդհանուր զարգացման ընդարձակ հորիզոններ բաց անեն» (7, 282):

Հովհ. Թումանյանը լավ գիտեր, թե որքան կարևոր է մտավորականների դերը ազգի նկարագրում, վարքագծում, առկա հիմնախնդիրների լուծման հնարավոր տարբերակների ընտրության մեջ: Բայց նա նաև հստակորեն գիտակցել է, որ իր ուզածն անիրականանալի է առանց մտավորականների նկատմամբ անհրաժեշտ հոգածության. «...էնտեղ, որտեղ առանց գրքի ու առանց գիտության կարող են ապրել, էնտեղ գրողն ու գիտնականը չեն կարող ապրել, ավելորդ մարդ են» (7, 235): Իհարկե հնարավոր է զուտ ֆիզիկական կեցություն նաև առանց գրքի ու գիտնականի, բայց նրա համար ընդօրինակելին իմաստուն ազգերի վարքագիծն էր. «Եվ իմաստուն ու հասուն ազգերը, իրենց ունեցած տաղանդների վրա ինչքան էլ առատ-առատ ծախսեն, լավ են իմանում, որ այսուամենայնիվ, շատ էժան գնով շատ թանկ բան են ձեռք բերում» (7, 269): Նրա այս համոզումները փաստարկված էր մտավորականի ազգային առաքելության իր ըմբռնումներով:

Հովհ. Թումանյանը հույսերի ու սպասումների վերելք է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելու ժամանակ («Դեպի մեծ կյանքը», 1915) և համոզված է եղել, որ մասնակից ենք դառնալու «մարդկության ընդհանուր հառաջադիմության գործին» (7, 171): Դրա արդյունքում հաղթահարվելու է ազգի «համատարած անգիտության» (7, 281) ցավալի վիճակը, որովհետև «...մեզանում սկսվելու է շատ վաղուց ի վեր չեղած մի կուլտուրական-ազգային ուժեղ շարժում...» (7, 282): Ցավոք սրտի, նրա հույսը չիրականացավ, բայց պահպանվեց կուլտուրական ազ-

գերի եղբայրության միջավայրում վերածնվելու, զարգացած ժողովուրդ դառնալու հնարավորության ուտոպիական համոզմունքը, որի մասին գրել էր դեռևս 1912 թվականին. «Ես ... հայոց թագավորության կարոտով մաշվողը չեմ: Ինձ համար լիովի հերիք է հայ ժողովրդի կուլտուրական ազատությունը կուլտուրական ժողովուրդների եղբայրության մեջ» (6, 371): Համենայնդեպս, հենց այդ համոզմունքով էլ Հովհ. Թումանյանը ծավալել է գրական-հասարակական եռանդուն գործունեություն, ամեն կերպ նպաստել, որ հրապարակային ելույթներում, հանրամատչելի դասախոսություններում, գրական երեկոների ժամանակ գերիշխի ոչ թե ճառը, այլ համապատասխան պրոֆեսիոնալիզմով հայտնի մտավորականի խոսքը: Եվ դա՛ նույնիսկ հակառակ դժվարին ժամանակների պարտադրանքներին, որովհետև լավ գիտեր ցեղի կենսափորձային ճշմարտությունը. «...հայ ժողովուրդը ինչ բարձր բան կատարել է, միշտ կատարել է՝ չնայելով նեղ ու դառն ժամանակին» (7, 327):

Եզրակացություններ

Հովհ. Թումանյանի ինտելեկտուալ կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ կենսափորձային ընդհանրական ճշմարտություններ ասելու կարողությունն էր: Ընդ որում, դա անխափան գործում էր ինչպես կենսական առանձին-մասնավոր դեպքերի, այնպես էլ համակեցական-համայնապատկերային հիմնախնդիրների դիտարկման ժամանակ: Դրա շնորհիվ նրա բանաձևած ճշմարտությունները հաճախ դարձել են վերժամանակյա ու ապրում են առ այսօր: Դա վերաբերում է նաև նրա թողած հրապարակախոսական ժառանգությանը, որում էականն ազգային ինքնությանը վերաբերող խնդիրներն են ու մատնանշված ճշմարտությունները: Սակայն վերջին դեպքում դա հաճախ ափսոսանք ու ցավ է հարուցում, որովհետև որքան էլ անցանկալի է, հայի ինքնության մեջ նրա մատնանշած մերժելի իրողություններն այսօր նկատելիորեն կենսունակ են, շարունակում են ձևավորել մեր արդիականությունը և պահպանում են ազգային կյանք ու ճակատագիր կանխորոշող բացասական գործոնի իրենց նշանակությունը:

Հետթումանյանական տասնամյակների ընթացքում շատ բան է անցել հայ ժողովրդի գլխով: Մասնավորապես խորհրդային տարիները նշանավորվել են կրթության, գիտության, գրատպության ու մամուլի աննախադեպ ծավալմամբ, որոշ տասնամյակներում նաև շատ թե քիչ ապահով կյանքով: Բայց մեր նկարագրում, ինտելեկտուալ հասունության կամ հասարակագիտական գրագիտության մեջ, ըստ էության, գրեթե ոչինչ չի փոխվել: Թերևս պատճառն այն է, որ, համազգային ռեֆլեքսիայի և սթափ վերագնահատումների փոխարեն, շարունակել ու դեռևս շարունակում ենք ապրել և մեր ինքնությունը պահպանել նույն սիմուլյակրների շրջանակներում: Մի բան, որի դեմ սկզբունքորեն պայքարում էր Հովհ.

Թումանյանը: Դա իրողություն է նույնիսկ հակառակ այն հանգամանքի, որ բազմաթիվ տարբերակներով վաղուց արդեն ունենք Հովհ. Թումանյանի ասած՝ հայոց պատմության գիտական բազմահատոր հրատարակությունները:

Ցավալի է ընդունել, որ Հովհ. Թումանյանի մատնանշած արատները ժամանակի ընթացքում արմատակալել են մեր ժողովրդի համար իմանենտ հատկանիշների դառնալու աստիճան: Մինչդեռ այս դեպքում ցանկալի է ճիշտ հակառակը, որ Հովհ. Թումանյանի հրապարակախոսությունը վաղուց կորցրած լինելի արդիականությունը և ունենար լրկ գրապատմական արժեք: Դրանով նրա վաստակից ու անչափելի մեծությունից ոչինչ չէր պակասի, բայց կշահեր մեր ինքնության որակը:

Թեև չկան ուղղակի վկայություններ, սակայն ենթադրելի է, որ, անցյալի փորձն ու իր օրերի իրականությունը, ազգի գոյատևման հիմնախնդիրը պատմահամեմատական մեթոդով դիտարկելու կողմնորոշումից բացի, հայի ինքնությանը բնորոշ բազմաթիվ արատների առկայության իմացությունն էլ է որոշակի նշանակություն ունեցել, որ Հովհ. Թումանյանին լքողներն չի զբաղեցրել մեր պետականության վերականգնման հարցը: Ամենայն հավանականությամբ, նա դրա համար անհրաժեշտ պոտենցիալ չի տեսել և բավարարվել է միայն զարգացած ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովրդի վերածնվելու հնարավորության գաղափարով: Հավատացել է վերածնվելու մեր հնարավորությանը, բայց ոչ պետականորեն կազմակերպված տարբերակով: Մինչդեռ դա միամտություն էր, որովհետև իր նկատի ունեցած կուլտուրական ազգերը հայտնի էին իրենց ուժեղ պետականությամբ:

Պարադոքսալ, բայց փաստ է, որ Հովհ. Թումանյանի կուլտուր-պատմական ուտոպիան դեռևս կենսունակ է մեր մեջ: Այլապես անգամ բարձր պաշտոնյաների, հայտնի կուսակցական գործիչների ու մտավորականների մի մասը վաղուց դադարած կլինել այն քաղաքական միամտությունը շահարկելուց, թե, հոգևոր-մշակութային երևելի արժեքներ ստեղծած ժողովրդի մեր միջազգային հեղինակությունը ամրապնդելով, կարող ենք լուծել մեզ համար կենսական կարևորության (օրիակ՝ Եղեռնի ընդունում, Արցախի ինքնորոշման իրավունքի ճանաչում և այլն) խնդիրները:

Մեր ինքնության բացահայտումներում, բնութագրերում, կրքոտ մերժումներում ու հաստատումներում Հովհ. Թումանյանն ազնիվ է ու անկեղծ: Ճիշտ այնպես, ինչպես բնութագրել է իր սիրելի և մեծարելի արվեստագետներից մեկին՝ Սայաթ-Նովային. «Ձայրացավ, բայց երբեք չհարացավ, ցավեց, բայց երբեք չանիծեց» (7, 59): Սայաթ-Նովայի ապրած կյանքի ու թողած ստեղծագործության զարմանալիորեն խորվերապրում-համազգացումով արված բնութագիր, որն ասես հենց իր մասին է: Ո՞վ գիտի՝ կեցության ու ներաշխարհի ինչ ընդհանրություններ է տեսել Հովհ. Թու-

մանյանն իր և Սայաթ-Նովայի միջև, որի արդյունքում նրա մասին իր ասածը հավասարապես բնութագրում է նաև իրեն: Իսկ դա մի բան է նշանակում. իր նույնիսկ վրդովմունք-գայրոյթի դրսևորումները ոչ թե դեմ են, այլ հանուն՝ լցված անսահման լավատեսությամբ. «Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը. ես լի եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատով» (7, 224): Միայն թե հանուն ազգային ինքնության և կենսունակության այնպիսի նկարագրի, որն ընդունելի կլիներ չափունների իր սանդղակի արժեհամակարգով:

Բայց քիչ է միայն ասելը, թե Հովհ. Թումանյանը, իրեն վիճակվածն ապրելով, չհարացավ ու չանհիծեց: Քիչ է, որովհետև նա ուներ մի այլ, ավելի բարձր չափանիշ, ըստ որի էլ իմաստավորեց իր երկրային կեցությունը. «Էսպես է, ով ուզում է լույս տա, պետք է էրվի» (7, 105): Դրա համար էլ ինքն այն չափորոշիչն է, որի հետ համեմատելով՝ հնարավոր է ճշտել մյուսների մարդկային նկարագիրն ու վաստակը մեր մշակույթում:

Սերգեյ Ա. Աղաջանյան - գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է մշակույթի տեսության, հայկական մշակույթի պատմության, նորագույն շրջանի հայկական արձակի պոետիկայի հիմնախնդիրները: Հեղինակ է գիտական մենագրությունների, տասնյակ հոդվածների, բուհական ուսումնական ձեռնարկների, պատմվածքների և վիպակների:

Summary

THE MAIN ISSUES OF THE ARMENIAN IDENTITY

(In Hovh. Tumanyan's publicity)

Sergey A. Aghajanyan

Key words - identity, publicity, culture, wisdom, scientificity, adherence to principles, historical experience, vital circumstances, simulacrum, relevance.

The article presents an analysis of the observations on the Armenian identity in one of the most important parts of Hovh. Tumanyan's literary heritage – in publicity.

The study consists of three main parts and summarizing conclusions.

The first part briefly reviews the main content and stylistic features of Hovh. Tumanyan's publicity. It is pointed out that the key issue of that publicity is the revelation of the defects characteristic of the Armenian identity and their causes, the

mentioning of the means of overcoming them. It is also shown that the sociological professionalism, honest and sincere patriotism of the author is evident in them, even in line with present-day standards, which his contemporaries did not always correctly understand and appreciate.

The second part of the study illustrates and explains the socio-political circumstances by which acknowledgement Hovh. Tumanyan became an active figure of literary and public life, serving it also with his unique identity of a writer. His active civic behavior also manifested itself in publicity not only as a formed worldview, a complex set of raised issues, but also a publicistic style and vocabulary. In this sense the objectivity and debatableness, being brief but at the same time substantive, often also imagery is inherent to his articles, etc.

The most extensive part of the article is the third one (“The Defects of the Armenian Identity and Their Causes”), in which the Tumanyan observations of the national identity are presented in three groups: the collective identity of the Armenian, the identity of the Armenian people, the identity of the Armenian intellectual. In all three cases, they are shown by Hovh. Tumanyan with differentiated assessments and qualifications, persuasive reasoning of the defects, the proposed solutions being conditioned with the author’s worldview. The historical and anthropological observations of the great intellectual are emphasized in the study, especially because they show the sociological depth of his mind and the generalizing power of the formed truths.

In the Tumanyan observations of the Armenian identity there are many characteristics and definitions worth of wise mind that are the result of both historical experience, and the wonderful knowledge of the vital realities and human descriptions of his time. Particularly with the latter circumstance is conditioned my reflection on the theoretical problems of retrospective evaluation of the national identity and historical experience, since they have not been ignored as well in Hovh. Tumanyan’s observations. The optimism about the future of the Armenian people expressed in the author’s publicity and its utopian manifestation are not neglected in the article, too.

The study concludes with resumptive conclusions that emphasize the relevance of Hovh. Tumanyan’s observations on national identity in our day as well, which should give rise to serious reflections for the people on the road to independence, especially for intellectuals.

ИМАНЕНТНЫЕ СВОЙСТВА АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ

(В публицистике Ов. Туманяна)

Сергей А. Агаджанян

Ключевые слова - идентичность, публицистика, культура, мудрость, научность, принципиальность, исторический опыт, жизненные обстоятельства, симулякр, актуальность.

В статье представлен анализ наблюдений, относящихся к идентичности армян, в одной из важнейших частей литературного наследия Ов. Туманяна – публицистике.

Исследование состоит из трех основных частей и заключительных выводов.

В первой части вкратце рассмотрены основные содержательные и стилистические особенности публицистики Ов. Туманяна. Отмечено, что стержневой проблемой этой публицистики является выявление присущих идентичности армян изъянов и их причин и указание средств их преодоления. Показано также, что в них очевидны соответствующий даже сегодняшним критериям обществоведческий профессионализм, честный и искренний патриотизм автора, который современники не всегда понимали и оценивали правильно.

Во второй части исследования показаны и объяснены общественно-политические обстоятельства, с осознанием важности которых Ов. Туманян стал активным деятелем литературной и общественной жизни, поставив на службу этому свою неповторимую самобытность. Его такой активный гражданский образ поведения проявился не только как сформированное мировоззрение, совокупность поднятых проблем, но и как публицистический стиль и лексикон. В этом отношении примечательны характерные для его статей объективность и полемичность, краткость в сочетании со схватыванием сути, часто также и образность и т. д.

Самая объемная часть статьи третья («Изъяны идентичности армян и их причины»), в которой туманяновские наблюдения над национальной идентичностью представлены тремя группами: сводная идентичность армян, идентичность армянского народа, идентичность армянского интеллигента. Во всех трех случаях показаны дифференцированные оценки и характеристики, данные им Ов. Туманяном, указаны убедительная аргументированность изъянов, обусловленность предложенных решений мировоззрением автора. Особое внимание в исследовании уделено теоретико-историческим и антропологическим наблю-

дениям великого представителя армянской интеллигенции, потому что особенно в них просматриваются обществоведческая глубина его мысли и обобщающая сила сформулированных истин.

В тумаяновских наблюдениях над идентичностью армян много характеристик и определений, имеющих ценность мудрой мысли, являющихся результатом как исторического опыта, так и отличного знания человеческих характеров своего времени. Особенно последним обстоятельством обусловлены авторские обращения к теоретическим вопросам ретроспективного осмысления национальной идентичности и исторического опыта, потому что они не были игнорированы в наблюдениях Ов. Тумаяна.

В статье не были игнорированы также оптимизм, выраженный в публицистике автора в отношении будущего армянского народа, и его утопические проявления.

Исследование завершается заключительными выводами, в которых подчеркивается актуальность наблюдений Ов. Тумаяна над армянской национальной идентичностью и в наши дни, что должно стать поводом к серьезным размышлениям для народа, ставшего на путь независимости, и особенно для нашей интеллигенции.

REFERENCES

1. **Aghajanyan S.**, Eghelut'yun, patmut'yun yev azgayin ink'nagitakts'ut'yun, «VĒM» hamahaykakan handes, Yer., 2011, N 2 (**In Armenian**).
2. **Alek'sanyan A.**, Levon Shanti yev Hovhannes T'umanyani kensaimastasirut'yunĕ, «VĒM» hamahaykakan handes, Yer., 2019, N 1 (**In Armenian**).
3. **Ananyan G.**, T'umanyani hrparakakhosut'yunĕ, «Zhurnalistika (tesut'yan yev patmut'yan harts'er)», prak Z, Yer., 2002 (**In Armenian**).
4. **Bayadyan H.**, Hayut'yan` vorpes ardiakan azgi gaghap'arĕ T'umanyani hrparakakhosut'yan mej, «Zhurnalistika (tesut'yan yev patmut'yan harts'er)», prak T', Yer., 2009 (**In Armenian**).
5. **Gevorgyan H.**, P'ilisop'ayut'yun. patmut'yun. mshakuyt', Yer., 2005 (**In Armenian**).
6. **Gyulnazaryan Kh.**, T'umanyani k'nnadatakan yev hrparakakhosakan zharangut'yunĕ, te's T'umanyan Hovh., Yerkeri liakatar zhoghovatsu tasĕ hatorov, hat. 6, Yer., 1994 (**In Armenian**).
7. **Hakhverdyan L.**, T'umanyanĕ yev ir zhamanakĕ, Yer., 1995 (**In Armenian**).
8. **Hakhverdyan L.**, T'umanyani ashkharhĕ, Yer., 1966 (**In Armenian**).
9. **Harut'yunyan Ēd.**, Azgayin ink'nut'yan yev kyank'i mshakuyt', Yer., 2004 (**In Armenian**).
10. **Harut'yunyan Ēd.**, Mardkayin kets'ut'yan aylakerpumnerĕ, Yer., 2018 (**In Armenian**).
11. **Harut'yunyan M.**, Hay hasarakut'yunĕ yev otarvats gitakts'ut'yan p'ilisop'ayut'yunĕ, Yer., 2014 (**In Armenian**).
12. **Karapetyan L.**, Hovhannes T'umanyani hasarakakan gortsuneut'yunĕ, Yer., 1992 (**In Armenian**).
13. **Jrbashyan Ēd.**, T'umanyani patmabanasirakan ashkhatut'yunnerĕ, te's T'umanyan Hovh., Yerkeri liakatar zhoghovatsu tasĕ hatorov, hat. 8, Yer., 1998 (**In Armenian**).
14. **Marut'yan H.**, Hay ink'nut'yan patkeragrut'yunĕ, Yer., 2009 (**In Armenian**).

15. **Mkhit'aryan Zh.**, Azgayin ink'nachanach'oghut'yunë Hovhannes T'umanyani hrparakakhosut'yunum, Yer., 2007 (**In Armenian**).
16. **Mkryan M.**, Hovhannes T'umanyani steghtsagortsut'yunë, Yer., 1981 (**In Armenian**).
17. **Nalch'ajyan A.**, Ĕt'nikakan hodgebanut'yun, Yer., 2001 (**In Armenian**).
18. **Step'anyan A.**, Patmut'yan kerpap'okhut'yunnerë Mets Hayk'um, Yer., 2012 (**In Armenian**).
19. **Step'anyan A.**, Patmut'yan hetagitsë, Yer., 2014 (**In Armenian**).
20. **T'umanyan N.**, Husher yev zruyts'ner, Yer., 1987 (**In Armenian**).
21. **T'umanyan Hovh.**, Mtk'er, Yer., 2015 (**In Armenian**).
22. **T'umanyan Hovh.**, Yerkeri liakatar zhoghovatsu tasë hatorov, hat. 6, Yer., 1994 (**In Armenian**).
23. **Zak'aryan S.**, «Mah kam azatut'yun» yerkënt'rank'ë hayots' ink'nut'yan mej, «BEH». p'ilisop'ayut'yun, hodgebanut'yun, Yer., 2018, hat. 3 (**In Armenian**).
24. **Zak'aryan S.**, «Menk'»-i yev «nrank'»-i kerparnerë haykakan ēposum, «BEH». p'ilisop'ayut'yun, hodgebanut'yun, Yer., 2018, hat. 1 (**In Armenian**).
25. **Zak'aryan S.**, Gurgen Maharu «Haykakan brigad»-ë azgayin ink'nut'yan hamatek'stum, «BEH». p'ilisop'ayut'yun, hodgebanut'yun, Yer., 2018, hat. 2 (**In Armenian**).
26. Zhurnalistika (tesut'yan yev patmut'yan harts'er), prak T', Yer., 2009 (**In Armenian**).
27. Zhurnalistika (tesut'yan yev patmut'yan harts'er), prak Z, Yer., 2002 (**In Armenian**).